

**ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/1**

**24 փետրվարի 2015 թ.**

Քննարկվեց «Գրավ» ՍՊԸ դիմում-բողոքը ՀՀ ՖՆ ՕՀՎ 23.01.2015 թ-ի թիվ 5010866 ակտի դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 21.10.2014 թ-ի թիվ 5010866 հանձնարարագրի համաձայն «Գրավ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ ՕՀՎ 23.01.2015 թ-ի թիվ 5010866 ակտը, որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 143.800.436 դրամ:

Նշվեց նաև, որ ՀՀ ՖՆ քննչական վարչությունում նյութեր են ստացվել «Գրավ» ՍՊԸ-ի վերաբերյալ: Նյութերի ուսումնասիրության արդյունքում ընկերության տնօրեն Հ.Հարությունյանի կողմից առանձնապես խոշոր չափերի հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքի կապակցությամբ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով 14.03.2014 թ-ին հարուցվել է թիվ 62204814 քրեական գործը, որի շրջանակներում ՀՀ ՖՆ քննչական վարչությունում կատարվում է նախաքննություն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն. «Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը»:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել և քննվում է թիվ 62204814 քրեական գործը, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Գրավ» ՍՊԸ դիմում-բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

«Գրավ» ՍՊԸ դիմում-բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել: Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**